

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱԶԵՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ



Հունիսի 25-ին Վրաստանի խորհրդարանը իր լիազուցար միստում ձեռնամուխ եղավ օրենսդիր մարմնի ղեկավարի ընտրությանը: Հիշեցնենք, որ հունիսի 20-ին խորհրդարանի շենքում, Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի ժամանակ Ռուսաստանի Դոմայի պատգամավոր Սերգեյ Գավրիլովի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպից հետո, խորհրդարանի նախագահ, 41-ամյա Իրակլի Կոբախիձեն, ստանձնելով տեղի ունեցածի քաղաքական պատասխանավորությունը, պաշտոնաթող եղավ:

Խորհրդարանի խոսնակի պաշտոնի համար, «Վրացական երազանք» կուսակցության խորհրդարանական մեծամասնությունն առաջադրեց մեծամասնության ղեկավար Արչիլ Թալակվաձեի թեկնածությունը: Նիստում գրանցված 101 պատգամավորների՝ 94 կողմ, ոչ մի դեմ ձայների հարաբերակցությամբ, նրան ընտրեցին (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

ԲԻԶՆԵՍ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՊԵՏՔ Ե ՊԱՏԺԵԼ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՅ, ՈՎՔԵՐ ՎԵՐԱՉԱՆՅՅՅԻՆ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ»

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՆԱԵՎ ԶՐՈՅԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՈՎ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ



Հունիսի 24-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության կենտրոնակայանում անցկացվեց կազմակերպության քաղխորհրդի նիստը, որին հաջորդեց կուսակցության խորհրդարանական մեծամասնության ղեկավարների հանդիպումը:

Ղար Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախկին նախագահ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանական մեծամասնության ղեկավար Արչիլ Թալակվաձեն, անցկացվեց մամլո ասուլիս, որտեղ կուսակցության նախագահ Բիծինա Իվանիշվիլին հանդես եկավ լայնամասշտաբ քաղաքական բարեփոխումների նախագծով: Ինչպես հայտարարեց Բիծինա Իվանիշվիլին, պետք է պատասխանատվության ենթարկել բոլոր նրանց, ովքեր (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ԲԱՅԱՌՎԱԾ ԶԷ ԿՈՍԼԻՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂՈՒՄԸ»

«Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցության կենտրոնակայանում կայացած հանդիպումից հետո, «Իմեդի» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն չքացառեց 2020 թվականի ընտրություններից հետո երկրում կուլիցիոն կառավարության ստեղծման հնարավորությունը:

- Վերջին ընտրությունների արդյունքների համաձայն, մենք նշանակալի աջակցություն ենք վայելում: Հետևաբար, այսօր 2020 թվականի հոկտեմբերին անցկացվելիք ընտրությունների կապակցությամբ կանխագծումների իրականացումը իրատեսա- (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀՈՒՆԻՍԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ՍԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱԶԵ. «ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ՕԳՏՎԵՅԻՆ ՄԱՐԴԿԱՆՅՑ ԱՐԴԱՐ ԲՈՂՈՔԻՑ»

«ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԼԵԳԻՏԻՄ ԵՐ»

Հունիսի 27-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հատուկ հրավիրված մամլո ասուլիսում ներկայացրեց իր գլխավորած կառավարության դիրքորոշումն ու գնահատականները հունիսի 20-ից երկրում ծավալվող իրադարձությունների կապակցությամբ:

Վարչապետի հավաստմամբ, այն, ինչ տեղի ունեցավ, դա ներքին գործերի նախարարության կամ նրա ղեկավարության ընտրությունը չէր: Սա նրանց պարտավորությունն էր, որ պաշտպանեին սահմանադրությունը, կարգ ու կանոնը երկրում եւ ժողովրդավարական ինստիտուտները: Մամուկա Բախտաձեի խոսքով, տեղի ունեցածը առավել ցավալի է, քանի որ միջադեպի արդյունքում տուժել են քաղաքացիներ, կան վիրավորներ ինչպես ցուցարարների, այնպես էլ՝ իրավապահների թվում: Վարչապետի հայտարարությամբ, իրավախախտում էր թույլ տրվել ինչպես ցուցարարների կողմից, ովքեր փորձեցին բռնությամբ ներխու-

ժել խորհրդարան, այնպես էլ՝ որոշակիորեն իրավապահների կողմից, քանի որ վավերացվել են ուժի չարաշահման փաստեր: Վարչապետը, չխուսափելով տեղի ունեցածի համար գործադիր իշխանության պատասխանատվության բաժնից, հայտարարեց, որ ուժի գերազանցման հարցով տարվում է հետաքննություն եւ մեղավորներն անպայմանորեն կպատժվեն, միաժամանակ տեղի ունեցածի համար քաղաքական եւ իրավական պատասխա- (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻՆ ԾՆՆԴՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ



Հունիսի 23-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ծննդյան օրվա առթիվ շնորհավորական ուղերձ է հղել Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանին:

«Հուսով եմ, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ հարաբերություններն ապագայում ավելի կխորանան: Հավաստիացնում եմ, որ միշտ պատրաստ եմ աջակցել մեր երկրների համագործակցության ամրապնդմանը»,- ասված է ուղերձում: Սալոմե Զուրաբիշվիլին Արմեն Սարգսյանին մաղթել է առողջություն, երջանկություն եւ ամենայն բարիք:

ՎՐԱՑ-ՀԱՅՎԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՆԻՍՏ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հունիսի 27-28-ը երեւանում անցկացվեցին Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առեւտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստն ու հայ-վրացական գործարար համաժողովը:



Վրացական կողմից միջկառավարական հանձնաժողովի նիստին մասնակցում է Վրաստանի փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարար Մայա Տքիտիշվիլին, իսկ հայկական կողմից՝ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը: Նիստում քննարկվել է հարցերի լայն շրջանակ՝ ներառյալ էներգետիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության, զբոսաշրջության, հումանիտար եւ բազմաթիվ այլ ոլորտներին վերաբերող հարցեր: Նիստի ավարտին կայացավ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ առեւտրատնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստի արձանագրության ստորագրման արարողությունը: Արձանագրության մեջ արտացոլված են երկու կառավարությունների այն հիմնական անելիքները, որոնք անհրաժեշտ հիմք (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԻՆՉԵՎ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՎԱՐՏՎԻ, ՊԱՇՏՈՆԱՆԿ ԶԵՄ ԼԻՆԻ»

Հունիսի 27-ին, Թբիլիսիի խորհրդարանում տեղ գտած միջադեպից գրեթե մեկ շաբաթ անց, Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիան խախտեց լռությունը եւ, իր դիրքորոշման պարզաբանման նպատակով, հանդիպում ունեցավ հեռուստաընկերությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը նախարարն անդրադարձավ հունիսի 20-ից երկրի խորհրդարանի շենքում եւ դրա շուրջ ծավալվող իրադարձություններին, Ռուսթավելու պողոտայում, խորհրդարանի առջեւ ցուցարարների դեմ իրավապահների կողմից ուժի կիրառմանը, ցուցարարների կողմից առաջադրված իր պաշտոնաթողության պահանջին, իր եւ իր գլխավորած գերատեսչության առաջիկա անելիքներին: Խոսելով ոստիկանության կողմից գործարարած միջոցառումների մասին՝ նախարարը նշեց, որ ոստիկանությունը այն ժամը զիջեց օգտվել է իր լեգիտիմ իրավունքից: Գիորգի Գախարիան (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

